ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶՈՐԱՅՐ ՍԱՄՎԵԼԻ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԲ.00.04 – Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2018

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
АРУТЮНЯН ЗОРАЙР САМВЕЛОВИЧ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОБИРАНИЯ, ПРОВЕРКИ И ОЦЕНКИ ЭЛЕКТРОННОГО ДОКУМЕНТА В УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ ДОКАЗЫВАНИИ РА

АВТОРЕФЕРАТ
диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.04 - Судебное право (судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

ЕРЕВАН – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում:

Գիտական ղեկավար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր՝ **Ա.Ս. Ղամբարյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
իրավաբանական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր՝ **Վ.Գ. Ենգիբարյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու,դոցենտ՝ **Ա.Ռ. Մարտիրոսյան**
Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հուլիսի 28-ին՝ ժամը 11:00-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2018 թվականի հունիսի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Ջ.Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Российско-Армянском университете

Научный руководитель:
доктор юридических наук, профессор **А.С. Гамбарян**
Официальные оппоненты:
доктор юридических наук, профессор **В.Г. Енгибарян**
кандидат юридических наук, доцент **А.Р. Мартиросян**
Ведущая организация: **Образовательный комплекс Полиции РА**

Защита состоится 28-ого июля 2018 года в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 28-ого июня 2018 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук Дж.А. Айрапетян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, տեղեկատվական հասարակության ձևավորումն իրենց ազդեցությունն են ունենում բոլոր հասարակական հարաբերությունների վրա, և բացառություն չեն նաև քրեադատավարական ապացուցման վերաբերյալ ծագող հասարակական հարաբերությունները:

Տեղեկատվական քաղաքակրթության ձևավորումը բարդ և հակասական սոցիալ-պատմական գործընթաց է: Այն սկսել է ձևավորվել XX-րդ դարի երկրորդ կեսին. այն ժամանակ, երբ մարդկության պատմության մեջ առաջին անգամ կատարվեց տեղեկատվական «պայթյուն» և որակապես փոխվեց տեղեկատվական հոսքերի դերն ու նշանակությունը:

Տեղեկատվական հասարակության ինչպես տեսականում, այնպես էլ պրակտիկայում ձևավորման հիմք են կազմել Դ.Բելլի հեղինակած «Ապագա հետարդյունաբերական հասարակությունը: Սոցիալական կանխատեսումների փորձը» աշխատությունը և Ճապոնիայի հասարակության համար տեղեկատվության դերի բարձրացմանն ուղղված պետական ծրագիրը:

Այս կամ այն տեխնոլոգիական, տնտեսական կամ սոցիալական գործընթացների վրա կատարված շեշտադրումների և ուշադրության աստիճանների բազմազանությունը հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել տեղեկատվական հասարակությանը բնորոշ հետևյալ յուրահատկությունները: Նախ և առաջ, դա ենթադրում է համակարգչային, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնիկայի զարգացվածության բարձր աստիճան և տեղեկատվական հզոր ենթակառուցվածքների առկայություն:

Հայաստանի Հանրապետությունը, հետևելով հասարակության կյանքի բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման համաշխարհային միտումներին, ևս հայտարարել է հասարակության տեղեկատվական զարգացման ապահովումը և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը որպես զարգացման առաջնային ուղղություն:

Հարկավոր է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում՝ տեղեկատվության շրջանառության գործընթացում առանցքային նշանակություն ունեն էլեկտրոնային փաստաթղթերը: Տեղեկատվական հասարակության ձևավորումը, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և լայն կիրառումը պայմանավորում են քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման և դեպի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն անցնելու հնարավորությանը վերաբերող հարցերի արդիականացումը:

Հատկանշական է, որ ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշման 1.7-րդ կետի պահանջների համաձայն էլեկտրոնային փաստաթղթի և տեղեկատվության իրավական կարգավիճակը չպետք է զիջի թղթայինին:

Էլեկտրոնային փաստաթուղթը, լինելով տեղեկատվության ինքնուրույն աղբյուր, իր ազդեցությունն է ունենում ընդհանուր ճանաչողական գործընթացի, այդ թվում նաև քրեադատավարական ապացուցման գործընթացի վրա: Քրեադատավարական

ապացուցումը և ապացուցման տարրերը քրեական արդարադատության իրականացման հարցում ունեն առանցքային դերակատարություն, քանի որ երաշխավորում են քրեական վարույթով վերջնական պատճառաբանված և հիմնավորված որոշման կայացումը և ապահովում են քրեական դատավարության մեկ փուլից անցումը դեպի մյուսը:

Վերոշարադրյալ գործընթացների առկայությունը պայմանավորում են քրեադատավարական ապացուցման ընթացքում մի շարք հարցերի առաջացումը, որոնց շարքին կարելի է դասել՝ քրեական դատավարությունում էլեկտրոնային փաստաթղթերի դերի, նշանակության և տեղի, թվային տեղեկատվության, որպես ապացույցի օգտագործման թույլատրելիության, էլեկտրոնային եղանակով դատավարական գործողությունների արձանագրման, էլեկտրոնային տեղեկատվական-որոնողական համակարգերի օգտագործման հնարավորության, համացանցում տեղակայված թվային տեղեկատվության՝ որպես ապացույցի, ձեռքբերման և այլնի վերաբերյալ հարցերը:

Թեև իրավակիրառ պրակտիկայում թվային տեղեկատվությունը ներկայումս հավաքվում և օգտագործվում է քրեադատավարական ապացուցման գործընթացում, սակայն դա կատարվում է հստակ իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Իրավակիրառողը կարծես ամբողջապես չի գիտակցում ապացույցների այս տեսակի բնույթը, ձեռքբերման եղանակի առանձնահատկությունները և, ըստ էության, կարևորում է այդ տվյալները թղթի վրա տպագրելու և ծագման աղբյուրը հիշատակելու հանգամանքները՝ դրանք համարելով բավարար ապացույցի թույլատրելիության հարցի մասին որոշում կայացնելու տեսանկյունից: Ավելին, օրենսդիրը նույնպես չի ձեռնարկում անհրաժեշտ քայլեր խնդրին օրենսդրական լուծում տալու ուղղությամբ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում՝ հաշվի առնելով, որ հասարակության զարգացման նոր ձևավորվող փուլում քրեական դատավարությունը չի կարող անմասն մնալ զարգացման ընդհանուր միտումներից: Բացի այդ, ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է հայրենական դատավարական իրավունքում թեմայի խորությամբ ուսումնասիրված չլինելու, գրականության մեջ դրա բազմաթիվ հարցերի շուրջ տարաբնույթ մեկնաբանությունների ու արտահայտված դիրքորոշումների առկայության, գործող օրենսդրությամբ ատենախոսության թեմային վերաբերող հարցերի կարգավորված չլինելու և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մակերեսային իրավակարգավորումների նախատեսման հանգամանքներով:

ՀՀ քրեադատավարական օրենսդրության այնպիսի ուսումնասիրության բացակայությունը, որի շրջանակներում կհետազոտվեին 2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավակարգավորումները, դրանց փոխազդեցությունը և փոխկապակցվածությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների հետ, ևս ատենախոսության թեմայի արդիականության բարձր աստիճանի վկայություն է:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի ձեռքբերման, ստուգման և

գնահատման վերաբերյալ քրեադատավարական հարաբերությունները հայրենական դատավարական իրավունքում մենագրության կամ ատենախոսության տեսքով չեն ուսումնասիրվել:

Հայրենական գրականության մեջ գիտական և այլ աշխատանքների տեսքով հետազոտվել են ատենախոսության թեմային առնչվող առանձին հարցեր, որոնք, սակայն, կրում են դրվագային բնույթ և չեն պարունակում արդի հիմնախնդիրների վերաբերյալ համարժեք համակարգային լուծումներ:

Էլեկտրոնային փաստաթղթերի ձեռք բերման, ստուգման և գնահատման վերաբերյալ իրավահարաբերություններն ուսումնասիրել են Ռուսաստանի Դաշնության մի շարք դատավարագետներ. առանձնահատուկ պետք է նշել՝ Ս.Վ. Զուևի «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը քրեական դատավարությունում», Ա.Ա. Պավլուշինայի «Դատավարական իրավունքի զարգացման հեռանկարները տեղեկատվական հասարակությունում», Ա.Տ. Բոնների «Քաղաքացիական և արբիտրաժային դատավարություններում ավանդական և ոչ ավանդական ապացուցման միջոցները» վերտառությամբ մենագրությունները, Պ.Ս. Պաստուխովի «Տեղեկատվական հասարակության պայմաններում քրեադատավարական ապացուցման մոդեռնիզացիան», Ն.Ա. Զիգուրայի «Համակարգչային տեղեկատվությունը՝ որպես ապացույցի տեսակ, Ռուսաստանի քրեական դատավարությունում», Ա.Վ. Օստրոուշկոյի «Համակարգչային տեղեկատվության ոլորտում կատարված հանցագործությունների քննության մեթոդիկայի կազմակերպական կտրվածքը», Ն.Ն. Լիտկինի «Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության ընթացքում համակարգչա-տեխնիկական հետքերի օգտագործումը» վերտառությամբ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունները:

Վերոհիշյալ և այլ գիտնականներն անառարկելի ներդրում են ունեցել քրեական դատավարության գիտության մեջ, սակայն, դրա հետ մեկտեղ, նրանց գիտական աշխատությունները հիմնականում նվիրված են տեղեկատվական հասարակության պայմաններում քրեադատավարական ապացուցման գործընթացի ձևափոխման վերաբերյալ ընդհանուր հարցերին:

Այսպիսով, քրեադատավարական ապացուցման գործընթացում ծագող իրավահարաբերությունների նկատմամբ տեղեկատվական հասարակության ձևավորման ազդեցության համակարգային ուսումնասիրություն, որում հաշվի կառնվեր հայաստանյան օրենսդրությունը և պրակտիկան չի իրականացվել:

Հետևաբար, իրավական նորմերի փոփոխությունների, ձևավորված նոր իրավակիրառ պրակտիկայի և քրեադատավարական գիտական մտքի էական զարգացման պայմաններում օբյեկտիվորեն կարիք է առաջանում ՀՀ քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի ձեռքբերման, ստուգման և գնահատման դատավարական առանձնահատկությունների համապարփակ ուսումնասիրության:

Հետազոտության օբյեկտը: Որպես հետազոտության օբյեկտ՝ հանդես են գալիս ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթերի ձեռքբերման, ստուգման և գնահատման վերաբերյալ ձևավորվող քրեադատավարական հարաբերությունները:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան տեղեկատվական հասարակությունում քրեադատավարական ապացուցման էությունն ու բովանդակությունն է, էլեկտրոնային փաստաթղթի հասկացության ու առանձնահատկությունների, ինչպես նաև քրեադատավարական ապացուցման գործընթացում դրանց ձեռքբերման, ստուգման և գնահատման, դատավարական կարգի տեսական վերլուծության, իրավակարգավորման և գործնականում կիրառման հարցերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը էլեկտրոնային փաստաթղթի էության, նշանակության, բնորոշ հատկությունների, քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի հավաքելու, ստուգելու և գնահատելու դատավարական առանձնահատկությունների տեսական, օրենսդրական ու գործնական հիմնահարցերի հնարավորինս ամբողջական ուսումնասիրությունն է, վերլուծությունը, ինչպես նաև կատարված հետազոտությունների արդյունքներով առաջադրված հարցերի լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Հետազոտության վերոգրյալ նպատակները կանխորոշել են փոխկապակցված և փոխպայմանավորված հարցերի հետևյալ ցանկը՝

- տալ էլեկտրոնային փաստաթղթի՝ որպես տեղեկատվության կրիչի տարատեսակի հեղինակային սահմանում,
- քննարկել էլեկտրոնային փաստաթղթի առանձնահատկությունները,
- ուսումնասիրել էլեկտրոնային փաստաթղթի և թվային տեղեկատվության հարաբերակցությունը,
- բացահայտել էլեկտրոնային փաստաթղթի տեղը և նշանակությունը քրեադատավարական ապացուցման գործընթացում,
- վերլուծել դատավարական գործողությունների արձանագրման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթերի կիրառման թույլատրելիության հարցը,
- ուսումնասիրել քրեադատավարական ապացույցի տեսակների համակարգը և որոշել ապացույցի այն տեսակը, որի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթուղթը կարող է օգտագործվել,
- հետազոտել քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի ձեռքբերման եղանակները և դրանց առանձնահատկությունները,
- վեր հանել էլեկտրոնային փաստաթղթի ստուգման և գնահատման դատավարական առանձնահատկությունները,
- վերլուծել հետազոտվող թեմայի վերաբերյալ ձևավորվող իրավակիրառ պրակտիկան և միջազգային փորձը,
- համակարգել հետազոտության արդյունքները և ներկայացնել հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ճանաչողական համագիտական մեթոդներ՝ վերլուծություն, համադրում, համակարգային մոտեցում, ինդուկցիայի և դեդուկցիայի տրամաբանական հնարքներ: Կիրառվել են նաև ֆորմալ-տրամաբանական, իրավահամեմատական, պատմական, մեկնաբանության և այլ մեթոդներ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքում ընկած են քրեական դատավարության իրավունքին, ապացուցման տեսությանը և տեղեկատվական հասարակությունում քրեադատավարական ապացուցման առանձնահատկություններին նվիրված մենագրություններ, ուսումնական դասագրքեր, դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ, գիտական հոդվածներ, ատենախոսությունների սեղմագրեր և այլ գիտական աշխատություններ: Դրանցից կարելի է հատկապես առանձնացնել Ս.Վ. Զուևի, Ռ.Ս. Բելկինի, Ռ.Վ. Շագիևայի, Յու.Կ. Օռլովի, Ա.Ա. Պավլուշինայի, Վ.Ի. Տիխոնովի, Ն.Ա. Իվանովի, Վ.Ա. Մեշերյակովի, Ր.Գ. Բիկմիևի, Վ.Բ. Վեխովի, Պ.Ս. Պաստուխովի, Տ.Ա. Պոլյակովայի, Վ.Ի. Շիկանովի, Ն.Ա. Զիգուրայի, Ա.Ս. Ղամբարյանի, Ս.Ա. Շեյֆերի, Ա.Ի. Վինբերգի, Ի.Լ.Պետրուխինի, Մ.Ս. Ստրոգովիչի, Ի.Յա. Ֆոյնիցկու, Ի.Մ. Ռասսոլովի, Ն.Ն. Տելեշինայի, Մ.Վ. Գորելովի, Ա.Տ. Բոնների, Գ.Ս. Ղազինյանի, Ս.Ա. Դիլբանդյանի, Ա.Ա. Էյսմանի, Լ.Մ. Լոբոյկոյի, Վ.Մ. Տրոֆիմենկոյի, Վ.Ա. Լազարևայի և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության իրավական և փորձառական հիմքն են կազմել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, նոր օրենսգրքի նախագիծը, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Էստոնիայի, Լեհաստանի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ուկրաինայի և այլ պետությունների քրեադատավարական օրենսդրությունները, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանները, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների դատական ակտերը, ինչպես նաև հետազոտությանն առնչվող ներպետական և օտարերկրյա պետությունների մի շարք այլ իրավական ակտեր:

Հետազոտության գիտական նորույթը: Հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ փորձ է արվել համալիր հետազոտել քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթուղթը՝ որպես ապացույցի օգտագործման վերաբերյալ քրեադատավարական հարաբերությունները՝ հիմնվելով ինչպես ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և նոր օրենսգրքի նախագծի, այնպես էլ օտարերկրյա առանձին պետությունների քրեադատավարական օրենսդրությունների իրավահամեմատական վերլուծության, տեսական կարծիքների ուսումնասիրության և պարզաբանման վրա:

Հետազոտվել են դատավարական գրականության մեջ ոչ ամբողջովին ուսումնասիրված կամ գրեթե չուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են թվային տեղեկատվության՝ որպես ապացույցի օգտագործման հնարավորությունը, թվային տեղեկատվության և էլեկտրոնային փաստաթղթերի փոխհարաբերակցության հարցը, էլեկտրոնային փաստաթղթի հասկացության և առանձնահատկությունների էությունը և նշանակությունը, էլեկտրոնային տեղեկատվական-որոնողական համակարգերի ներդրման և շահագործման հնարավորությունը, քրեադատավարական ապացուցման գործընթացում թվային տեղեկատվությունը հավաքելու եղանակների և դրանց դատավարական առանձնահատկությունների հիմնահարցը և այլն: Այս և այլ հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրական փոփոխություններին վերաբերող առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Ատենախոսության մեջ առաջարկվում է էլեկտրոնային փաստաթղթի հետևյալ սահմանումը. «Էլեկտրոնային փաստաթուղթը համակարգչային տեխնիկայի միջոցով ստեղծված ֆայլում արձանագրված թվային տեղեկատվություն է, որը հաստատվում և անհատականացվում է մեկ կամ մի քանի անձանց էլեկտրոնային թվային ստորագրությունների (կամ թվային մատնահետքերի) և այլ ռեկվիզիտների միջոցով»:

Այս բնորոշումը էապես տարբերվում է գործող օրենսդրությամբ էլեկտրոնային փաստաթղթին տրվող սահմանումից՝ նախատեսելով փաստաթղթում ամրագրված տեղեկատվության հաստատման և դրա հեղինակի անհատականացման հնարավորություն ընձեռող էլեկտրոնային թվային ստորագրությունների կամ թվային մատնահետքերի առկայության պարտադիր պահանջ:

2. Էլեկտրոնային փաստաթղթերի առանձնահատկությունները և իրեղեն ապացույցին ներկայացվող պահանջների համադրությունը թույլ է տալիս փաստել, որ էլեկտրոնային փաստաթուղթը չի կարող օգտագործվել ՀՀ քրեադատավարական ապացուցման գործընթացում, իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում: Իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում չեն կարող օգտագործվել այնպիսի փաստաթղթեր, որոնց ապացուցողական արժեքը կայանում է դրանց բովանդակության մեջ: Նշվածը *a priori* զրոյացնում է իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման հավանականությունը:

3. Յուրաքանչյուր փաստաթուղթ (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փաստաթուղթ) կարող է այլ փաստաթղթի դատավարական ձևի շրջանակներում ստանալ քրեադատավարական ապացուցման գործընթացում ապացույցի թույլատրելիության հատկություն, եթե դրանում, ի թիվս այլնի, առկա են բավարար տվյալներ փաստաթղթի հեղինակի մասին (տվյալներ, որոնք թույլ են տալիս անհատականացնել այն պաշտոնատար կամ մասնավոր անձին, ով ստորագրել է այդ փաստաթուղթը):

Էլեկտրոնային փաստաթղթի վերոնշյալ հեղինակային սահմանման իմաստով էլեկտրոնային փաստաթուղթն ամբողջովին բավարարում է այլ փաստաթուղթ ճանաչվելու համար նախատեսված պահանջներին, այն է՝ էլեկտրոնային փաստաթուղթն իր մեջ պարտադիր պարունակում է էլեկտրոնային թվային ստորագրություն կամ թվային մատնահետք, ինչը փաստաթղթի հեղինակի մասին բավարար տվյալ է:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի առաջին մասով սահմանված՝ քրեական դատավարությունում թույլատրվող ապացույցների ցանկում բացակայում է ապացույցի այնպիսի տեսակ, որի դատավարական ձևի շրջանակներում թույլատրելի կհամարվեր օգտագործել անհատականացման հնարավորություն չունեցող էլեկտրոնային փաստաթուղթն ապացուցման գործընթացում:

Ուստի անհրաժեշտ է լրացնել վկայակոչված իրավադրույթը և ամրագրել էլեկտրոնային ապացույցը որպես ապացույցի ինքնուրույն տեսակ՝ դրանով իսկ սահմանելով քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների

հաստատմանը կամ հերքմանը նպաստող թվային տեղեկատվության յուրաքանչյուր տեսակի (այդ թվում նաև այն թվային տեղեկատվության, որն անհնար է անհատականացնել և պարզել դրա հեղինակին) օգտագործման հնարավորություն:

5. Քրեադատավարական ապացուցման գործընթացում ապացուցողական նշանակություն ունի ոչ թե թվային տեղեկատվության նյութական կրիչը (օրինակ՝ սկավառակը, համակարգիչը), այլ անմիջապես թվային տեղեկատվությունը: Հետևապես, թվային տեղեկատվությունը քրեադատավարական ապացուցման գործընթացում անհրաժեշտ է դիտարկել դրա նյութական կրիչից զատ:

Թվային տվյալների՝ որպես ինքնուրույն ապացույցի տեսակի (այլ փաստաթղթից տարանջատված), և դրա ձեռքբերման հարցին ճիշտ մոտենալու համար թվային տվյալի և դրա նյութական կրիչի տարանջատումն ունի հիմնարար նշանակություն:

6. Ըստ թվային տեղեկատվության անհատականացման միջոցի առկայության՝ էլեկտրոնային ապացույցները դասակարգվում են երկու հիմնական տեսակի՝ էլեկտրոնային փաստաթղթերի, հաշվի առնելով թվային տեղեկատվության այս տեսակի անհատականացման հնարավորությունը, և այլ թվային տեղեկատվության, որը թեև պարունակում է ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություններ, սակայն զուրկ է անհատականացման հնարավորությունից (օրինակ՝ համակարգչային տեխնիկայի միջոցով ստեղծված և էլեկտրոնային թվային ստորագրությամբ չհաստատված ցանկացած փաստաթուղթը):

7. Էլեկտրոնային ապացույցներ (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փաստաթղթեր) հավաքելը քրեադատավարական ապացուցման գործընթացում հնարավոր է երեք եղանակով՝ քննչական կամ դատական գործողությունների կատարման, էլեկտրոնային ապացույցներ պահանջելու և քրեական վարույթի մասնավոր մասնակցի կողմից ներկայացվող էլեկտրոնային ապացույցներն ստանալու ճանապարհներով:

Որպես թվային տեղեկությունները հավաքելու քննչական գործողություն՝ անհրաժեշտ է սահմանել զննությունը, որը պետք է իրականացվի (անհրաժեշտության դեպքում) դատարանի որոշման հիման վրա՝ կատարելով թվային տեղեկատվության կրկնօրինակում: Ընդ որում, որպես զննության օբյեկտ պետք է լինի էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի բովանդակությունը:

Համացանցում տեղակայված թվային տեղեկատվությունը կարող է ձեռք բերվել զննություն կատարելու միջոցով, որի դեպքում, որպես զննության օբյեկտ, անհրաժեշտ է դիտարկել վիրտուալ տարածության այն կտրվածքը, որը ողջամտորեն կարող է պահպանած լինել հանցագործության հետքեր կամ որևէ այլ կերպ կապված լինել հանցագործության հետ:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նախատեսել քննիչի էլեկտրոնային տեղեկատվական-որոնողական համակարգին պահանջ ներկայացնելու միջոցով ապացուցողական նշանակություն ունեցող թվային տեղեկատվություն ձեռք բերելու իրավունքը՝ սահմանելով այդ համակարգից օգտվելու համընդհանուր կարգ:

8. Ապացուցողական նշանակություն ունեցող թվային տեղեկատվությունը դատավարական իմաստով հավաքելու գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար նպատակահարմար է նախատեսել իրավական ակտերով սահմանված որոշակի խումբ գործեր (համակարգչային հանցագործություններ և այլն) մասնագիտացված քննիչների կողմից քննելու պահանջ: Ընդ որում,

«մասնագիտացված քննիչ» ասելով՝ նկատի ունենք իրավաբանական կրթություն ունեցող այն անձանց, ովքեր ստացել են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի համապատասխան որակավորում:

Պաշտպանության են ներկայացվում նաև հեղինակի՝ եզրափակիչ դրույթներում տեղ գտած այլ օրենսդրական առաջարկությունները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ հայրենական դատավարական իրավունքում առաջին անգամ մշակվել է քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթի՝ որպես ապացույցի, ձեռքբերման, ստուգման և գնահատման վերաբերյալ համակողմանի հետազոտությանը նվիրված աշխատություն, որում տեղ գտած տեսական եզրահանգումները կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ տեսական պատկերացումների ընդլայնմանը, դառնալ գիտական կառուցողական բանավեճերի առարկա և լինել տեսական աղբյուր հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար:

Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացված օրենսդրական առաջարկությունները կարող են օգտագործվել օրենսդրի կողմից ՀՀ քրեադատավարական օրենսդրության զարգացման նպատակով, ինչպես նաև նպաստել իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրների լուծմանը: Բացի այդ, սույն ատենախոսությունն ունի կիրառական նշանակություն, քանի որ դրանում արված եզրահանգումների տեղայնացումն իրավակիրառ պրակտիկայում կհանգեցնի քրեական արդարադատության մատչելիության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով իրավապահ և արդարադատություն իրականացնող մարմինների նկատմամբ հասարակական վստահության ցուցանիշների աճին:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել նաև թեմային նվիրված ուսումնական դասընթացների կամ քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինների գործունեության ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում: Ատենախոսության քննարկումն ու գրախոսումը ևս իրականացվել է Հայ-Ռուսական համալսարանում:

Հետազոտության արդյունքների հիմնական մասը տեղ է գտել հեղինակի գիտական հոդվածներում, որոնք հրատարակվել են ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված՝ գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում:

Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտաժողովների, աշխատաժողովների և առանձին քննարկումների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք միասին ներառում են յոթ պարագրաֆ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության և իրավական աղբյուրների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են դրա մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, ձևակերպվում են նպատակները և խնդիրները, հետազոտության տեսական, նորմատիվ, փորձառական, մեթոդոլոգիական հիմքերը, հիմնավորվում է գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող դրույթները, որոշվում է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ներառվում հետազոտության արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Ապացուցողական իրավունքի զարգացման միտումները տեղեկատվական հասարակությունում»** վերնագրով գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին՝ **«Ապացուցման հասկացությունը և տարրերը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում»** վերատառությամբ պարագրաֆում վերլուծության է ենթարկվում քրեական դատավարության ոլորտին վերաբերող ամենակարևոր և առանցքային գործընթացներից՝ ապացուցումը, որի վերանայման արդիականությունը հիմնավորվում է, նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական դատավարությունը չի կարող անմասն մնալ հասարակության ընդհանուր զարգացման միտումներից: Մասնավորապես նշվում է, որ իրավական յուրաքանչյուր ինստիտուտ, այդ թվում նաև՝ քրեադատավարական ապացուցումը, պայմանավորված է հասարակության սոցիալ-տնտեսական հենքով և, հետևաբար, ենթարկվում է փոխակերպման դրանում կատարվող գործընթացների հետևանքով: Փաստվում է նաև, որ ապացուցումը շարժիչ ուժ է, որն ապահովում է քրեական դատավարության մի փուլից անցումը մյուս փուլ՝ մինչ քրեական գործի վերջնական հանգուցալուծումը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ու տեղեկատվական հասարակության ձևավորման ազդեցությունը քրեադատավարական ապացուցման գործընթացի վրա լիարժեքորեն մեկնաբանելու նպատակով, պարագրաֆում վերլուծության է ենթարկվում տեղեկատվական հասարակության և քրեադատավարական ապացուցման հասկացությունները, ինչպես նաև դրանց փոխազդեցության վերաբերյալ տեսությունում առկա մոտեցումները:

Շեշտվում է, որ հասարակության զարգացման այս փուլի համար բնորոշ տարրերն են՝ տեղեկատվության, գիտելիքի և տեղեկատվական տեխնոլոգիաների դերի կարևորումը հասարակության կյանքում, համաշխարհային տեղեկատվական հարթակի ստեղծումը, հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը հեռախոսային կապի, ռադիոյի և հեռուստատեսության, համացանցի, ինչպես նաև ավանդական և էլեկտրոնային ՁԼՄ-ների միջոցով և այլն:

Իրականացված վերլուծությունների և ուսումնասիրությունների արդյունքում պարագրաֆում տրվում է եզրույթների և հասկացությունների այն ամբողջությունը, որը իրենից ներկայացնում է հաջորդող գլուխներում և պարագրաֆներում հետազոտությունների և դրանց արդյունքների հիմնավորումների համար անհրաժեշտ գործիքակազմ:

Երկրորդ՝ **«Դատավարական ձևի պարզեցումը տեղեկատվական հասարակությունում»** վերնագրով պարագրաֆում հանգամանորեն ուսումնասիրվում է տեղեկատվական հասարակության ձևավորման ազդեցությունը քրեական դատավարության վարութային ձևի պարզեցման վրա:

Քննարկելով դատավարական ձևի և ֆորմալիզմի բնույթը տեղեկատվական հասարակության ձևավորման և տեխնիկական միջոցների լայն կիրառման համատեքստում՝ առանձնակի ուշադրության առարկա են դարձվում դատավարական գործողությունների իրականացման, դատավարական որոշումների կայացման գործընթացներում տեխնիկական միջոցների օգտագործման հնարավորությունը և միտումները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դիտարկելով որպես դատավարական ֆորմալիզմի հետևանք հանդիսացող խնդիրների լուծման հնարավորություն, դատավարության «էլեկտրոնայնացման» հնարավորությունները ենթարկվում են մանրամասն ուսումնասիրության: Մասնավորապես նշվում է, որ տեխնիկական միջոցների օգտագործումը լայն հնարավորություններ է ստեղծում դատավարական իրավահարաբերությունների պարզեցման և արդարադատության մատչելիության մակարդակի բարձրացման համար: Միևնույն ժամանակ, փաստվում է, որ իրականացված ուսումնասիրությունների համաձայն քրեադատավարական իրավահարաբերություններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացում հիմնական շեշտը դրվում է էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային համակարգերի (ծրագրերի) շահագործման վրա:

Հիշյալ պարագրաֆում դատավարական ձևի պարզեցման խնդիրների վերաբերյալ իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում արձանագրվում է, որ քրեադատավարական իրավահարաբերությունների պարզեցման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը տարածված երևույթ է:

Վերոնշյալ ամփոփմամբ առաջարկվում է վերացնել դատավարական ֆորմալիզմի դրսևորման այն իրավակարգավորումները, որոնց հիման վրա թղթային քրեական գործը շարունակում է մնալ քրեական դատավարության նյութական սուբստրատի մենաշնորհային դիրքում, և օրենսդրորեն սահմանել քրեական դատավարության մասնակիցների հնարավորությունը՝ օգտագործել տեխնիկական այն բոլոր հնարավորությունները, որոնք արդարադատության իրականացման գործընթացը կարող են դարձնել առավել մատչելի և ժամանակակից:

Երկրորդ՝ **«Էլեկտրոնային փաստաթղթերը ՀՀ քրեադատավարական իրավունքի տիրույթում»** վերտառությամբ գլուխը ևս բաղկացած է երկու պարագրաֆից:

Առաջին՝ **«Էլեկտրոնային փաստաթղթի հասկացությունը և հատկանիշները»** վերտառությամբ պարագրաֆում մանրամասն ուսումնասիրության առարկա է դարձվում էլեկտրոնային փաստաթղթի էությունը և տրվում դրա հասկացության հեղինակային սահմանումը:

Շեշտվում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում՝ հեռահաղորդակցման գործընթացում, առանցքային նշանակություն ունեն էլեկտրոնային փաստաթղթերը: Արձանագրվում է, որ էլեկտրոնային փաստաթուղթն անհրաժեշտ է դիտարկել որպես փաստաթղթի տարատեսակ, որն իրավական կարգավիճակի առումով ոչնչով չի զիջում ավանդական փաստաթղթին:

Վերլուծությունների արդյունքում առանձնացված էլեկտրոնային փաստաթղթին բնորոշ հատկությունների ամփոփմամբ առաջարկվում է էլեկտրոնային փաստաթղթի հետևյալ սահմանումը՝ *«Համակարգչային տեխնիկայի միջոցով ստեղծված ֆայլում արձանագրված թվային տեղեկատվություն, որը հաստատվում և անհատականացվում է*

մեկ կամ մի քանի անձանց էլեկտրոնային թվային ստորագրությունների (կամ թվային մատնահետքերի) և այլ ռեկվիզիտների միջոցով»:

Շեշտվում է նաև այն հանգամանքը, որ էլեկտրոնային փաստաթուղթը հարաբերակցվում է թվային տեղեկատվության հետ, ինչպես մասն ամբողջի հետ:

Իրականացված հետազոտությունների հիման վրա փաստվում է, որ անգամ էլեկտրոնային փաստաթուղթ չհանդիսացող թվային տեղեկատվությունը կարող է կրել ապացուցողական նշանակություն, ուստի արձանագրվում է նաև, որ յուրաքանչյուր թվային (համակարգչային) տեղեկատվություն, որը կարող է ծառայել քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու գործին անհրաժեշտ է դիտարկել որպես էլեկտրոնային ապացույց:

Օգտագործելով տեղեկատվության անհատականացման հնարավորությունը՝ որպես էլեկտրոնային ապացույցների դասակարգման չափանիշ, առանձնացվում է էլեկտրոնային ապացույցների երկու հիմնական տեսակ՝ էլեկտրոնային փաստաթուղթ և այլ թվային տեղեկատվություն:

Երկրորդ՝ **«Էլեկտրոնային փաստաթղթի առանձնահատկությունները որպես ապացույցի աղբյուր»** վերնագրով պարագրաֆում վերլուծության են ենթարկվում ապացույցների առանձին տեսակների դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման հնարավորության վերաբերյալ հարցերը: Ուսումնասիրության առարկա է դարձվում որպես ապացույցների աղբյուր էլեկտրոնային փաստաթղթերը դիտարկելու հնարավորությունը հետևյալ երեք դատավարական կարգաճակների շրջանակներում՝ 1.) որպես քննչական կամ դատական գործողության արձանագրություն, 2.) որպես իրեղեն ապացույց, 3.) որպես այլ փաստաթուղթ:

Հիշատակված երեք դատավարական կարգավիճակներից առաջինի վերաբերյալ իրականացված վերլուծությունը թույլ է տալիս ատենախոսին փաստել, որ գործող քրեադատավարական օրենսդրության համաձայն սահմանված է քննչական գործողությունների պարզ գրավոր արձանագրման կարգ և դատական գործողությունների ձայնային արձանագրման և համակարգչային եղանակով միաժամանակ համառոտագրման արձանագրման կարգ:

Իրականացված հետազոտությունների արդյունքում առաջարկվում է սահմանել դատավարական գործողությունների արձանագրման խառը տարբերակը (անկախ դատավարության փուլից), որն իրենից ներկայացնում է արձանագրման գործընթացում տեխնիկական միջոցների գործադրմանը զուգահեռ համառոտ թղթային արձանագրության կազմում:

Իրեղեն ապացույցի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման հնարավորության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում շեշտվում է, որ թվային տեղեկատվության ապացուցողական նշանակությունը հետազոտելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդպիսի նշանակությունը կրում է ոչ թե թվային տեղեկատվության նյութական կրիչը, այլ տվյալ տեղեկատվության բովանդակությունը: Այսինքն, էլեկտրոնային փաստաթուղթը չունի արտաքին, ֆիզիկական հատկություններ և օբյեկտիվորեն անհնար է, որ պահպանած լինի հանցագործության կատարման հետևանքով ֆիզիկական ներգործության որևէ տեսակի հետք: Փաստվում է, որ

քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթուղթը չի կարող ճանաչվել և օգտագործվել որպես իրեղեն ապացույց:

Այլ փաստաթղթի դատավարական ձևի շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթի օգտագործման հնարավորության հարցի վերաբերյալ իրականացված հետազոտության արդյունքում փաստվում է, որ այլ փաստաթուղթ կարող է լինել միայն այնպիսի փաստաթուղթը, որը պարունակում է անհատականացման հնարավորություն և ձեռք է բերվել իրականացված պատշաճ դատավարական ընթացակարգի արդյունքում:

Շարադրվածը նշանակում է, որ էլեկտրոնային փաստաթուղթը գործող օրենսդրական սահմանման իմաստով չի կարող ճանաչվել և օգտագործվել քրեադատավարական ապացուցման գործընթացում որպես այլ փաստաթուղթ: Միևնույն ժամանակ, էլեկտրոնային փաստաթղթի առաջարկվող հեղինակային սահմանման իմաստով այն ամբողջովին համապատասխանում է այլ փաստաթուղթ ճանաչվելու համար վերոշարադրյալ պահանջներին:

Ատենախոսի կողմից փաստվում է նաև այն հանգամանքը, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում թվային տեղեկատվությունը (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փաստաթղթի) քրեադատավարական ապացուցման գործընթացում օգտագործման համար բավարար չափի կարգավորումներ:

Վերոգրյալի ամփոփմամբ առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի առաջին մասում ամրագրել էլեկտրոնային ապացույցը, որպես ապացույցի ինքնուրույն տեսակ: Ընդ որում, էլեկտրոնային ապացույցը, որպես ապացույցի ինքնուրույն տեսակ իր մեջ պետք է ներառի ինչպես էլեկտրոնային փաստաթղթերը, այնպես էլ թվային տեղեկատվության յուրաքանչյուր այլ տեսակ:

Երրորդ՝ **«Էլեկտրոնային փաստաթղթերը հավաքելու, ստուգելու եվ գնահատելու առանձնահատկությունները»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին՝ **«Էլեկտրոնային փաստաթղթի ձեռքբերման դատավարական առանձնահատկությունները»** վերնագրով պարագրաֆում ուսումնասիրության առարկա են դարձվում քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային փաստաթղթերի ձեռքբերման եղանակները: Շեշտվում է այն հանգամանքը, որ փաստաթուղթը ընդհանրապես կարող է ձեռք բերվել երեք հիմնական եղանակով՝ քննչական կամ դատական գործողությունների կատարման, փաստաթղթեր և նյութեր պահանջելու և քրեական վարույթի մասնավոր մասնակցի կողմից ներկայացվող էլեկտրոնային փաստաթղթերի ձեռքբերման եղանակներով:

Իրականացված վերլուծությունների արդյունքում առաջարկվում է, որպես թվային տեղեկատվությունը հավաքելու քննչական գործողություն սահմանել զննությունը, այն լրացնելով հավելյալ դատավարական երաշխիքներով: Մասնավորապես սահմանելով, որ ապացուցողական նշանակություն ունեցող թվային տեղեկատվությունը պետք է ձեռք բերվի քրեական գործը քննող տեխնիկական կրթություն ունեցող քննիչի կողմից, դատարանի որոշման հիման վրա (անհրաժեշտության դեպքում) կատարվող զննության միջոցով՝ իրականացնելով թվային տեղեկատվության կրկնօրինակում:

Քննչական պահանջ ներկայացնելու եղանակով թվային տեղեկատվության ձեռքբերման հարցի վերաբերյալ փաստվում է, որ առկա է օրենսդրական բաց, այն է

բացակայում են վարույթն իրականացնող մարմնի կողմից փաստաթղթեր և նյութեր պահանջելու ընթացակարգի հստակ իրավակարգավորումներ:

Ատենախոսը արձանագրում է, որ անհրաժեշտ է ուղղակիորեն նախատեսել քննիչի ինչպես պարզ թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով (այդ թվում նաև՝ թվային տեղեկատվական շտեմարանների միջոցով) փաստաթղթեր և նյութեր պահանջելու իրավունքը, իսկ այդպիսի պահանջին ի պատասխան ներկայացվող տեղեկատվությունն ընդունել որպես պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում ձեռք բերված ապացույց:

Ատենախոսի կողմից շեշտվում է էլեկտրոնային շտեմարանից օգտվելու համար քննիչի կողմից անհատական էջ ունենալու և այդ էջի շահագործման միջոցով համապատասխան տեղեկատվության որոնողական գործողություններ կատարելու օրենսդրական հնարավորության սահմանման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ փաստվում է, որ այդ էջի շահագործման արդյունքում ստացված տեղեկատվությունը պետք է անմիջապես հաստատվի քննիչի էլեկտրոնային թվային ստորագրությամբ և պարունակի համապատասխան տվյալներ էլեկտրոնային շտեմարանի այն անհատական էջի մասին, որի միջոցով այն ստացվել է, ինչպես նաև տեղեկատվության ստացման ժամանակի մասին, այն քրեական գործի մասին, որի շրջանակներում ներկայացվել է քննիչի համապատասխան պահանջը:

Քրեական վարույթի մասնավոր մասնակցի կողմից էլեկտրոնային փաստաթղթեր ներկայացնելու միջոցով էլեկտրոնային փաստաթղթեր հավաքելու վարույթն իրականացնող մարմնի հնարավորության վերաբերյալ ատենախոսը արձանագրում է, որ անգամ գործող օրենսդրությունն է թույլ տալիս նման եղանակով էլեկտրոնային փաստաթղթեր հավաքել, սակայն ապացույցի դատավարական կարգավիճակ շնորհելու համար պետք է իրականացվեն ապացույցներ հավաքելու հաջորդ ենթափուլերը, այն է՝ ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի ստացումը, ամրագրումը, առգրավումը և պահպանումը:

Վերոշարադրյալի ամփոփմամբ արձանագրվում է, որ քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային ապացույցներ (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փաստաթղթեր) ևս հնարավոր է հավաքել երեք եղանակով՝ քննչական կամ դատական գործողությունների կատարման ճանապարհով, էլեկտրոնային ապացույցներ պահանջելու և քրեական վարույթի մասնավոր մասնակցի կողմից ներկայացվող էլեկտրոնային ապացույցներն ստանալու ճանապարհներով: Միևնույն ժամանակ, նշված երեք եղանակներով էլեկտրոնային ապացույցներ ձեռք բերելու հնարավորության ամրապնդման նպատակով դրանց կատարման վերաբերյալ օրենսդրական կարգավորումներում պետք է իրականացվեն մի շարք համապատասխան լրացումներ:

Երկրորդ՝ **«Համացանցում տեղակայված էլեկտրոնային փաստաթղթի ձեռքբերման դատավարական առանձնահատկությունները»** վերտառությամբ պարագրաֆում վերլուծության է ենթարկվում նյութական կրիչ չունեցող թվային տեղեկատվության (այդ թվում նաև՝ էլեկտրոնային փաստաթղթի) ձեռք բերման հնարավորությունը, այն հավաքելու դատավարական եղանակը և առանձնահատկությունները: Շեշտվում է, որ անկախ նրանից թե արձանագրված է

արդյոք թվային տեղեկատվությունը նյութական կրիչի վրա, թե ոչ այն անհրաժեշտ է հավաքել զննում քննչական գործողությունը կատարելու եղանակով:

Պարագրաֆում առանձնահատուկ վերլուծության առարկա է դարձվում զննման օբյեկտներից «տեղանք» հասկացությունը և դրա սահմանները, ինչպես նաև «համացանցի միջավայր» և «վիրտուալ տարածություն» հասկացությունները:

Ուսումնասիրությունների արդյունքում փաստվում է, որ քրեադատավարական իրավունքի իմաստով տեղանք է այն տարածությունը, ուր կարող են պահպանված լինել հանցագործության հետ որևէ անմիջական կապ ունեցող հետքեր, առարկաներ (փաստաթղթեր) կամ կենդանիներ:

Արձանագրվում է նաև, որ հարաբերականորեն նոր լինելու պատճառով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հասկացությունները դեռևս կայացած չեն անգամ հատուկ գիտություններում և չունեն հստակ ամրագրում և սահմանումներ:

Հիշյալ պարագրաֆում իրականացված եզրույթների վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևության, որ քրեադատավարական իրավունքի տիրույթում օգտագործվող «տեղանք» հասկացության հետ համադրելիության հնարավորության հարցի ուսումնասիրության տեսանկյունից նախընտրելին «վիրտուալ տարածություն» եզրույթն է, որը գրականության մեջ տեղ գտած եզրույթներից առավել չեզոքը և հստակն է: Նշված եզրույթի հասկացության և հատկանիշների ուսումնասիրության արդյունքում, փաստվում է «վիրտուալ տեղանք» հասկացության սահմանման և վերլուծության անհրաժեշտությունը: Ատենախոսը առաջարկում է «վիրտուալ տեղանք» հասկացության հետևյալ սահմանումը՝ վիրտուալ տեղանքը վիրտուալ տարածության այն կտրվածքն է, որը պարունակում է այնպիսի թվային տեղեկատվություն կամ էլեկտրոնային փաստաթղթեր, որոնք, դատելով իրադրությունից, ողջամտորեն կարող էին իրենց վրա պահպանել հանցագործության հետքեր կամ կապ ունենալ հանցագործության հետ:

Ամփոփելով վերոգրյալը և պարագրաֆում տեղ գտած վերլուծությունները, ատենախոսը փաստում է, որ պարագրաֆում շարադրվածը վկայում է այն մասին, որ ժամանակակից իրավահարաբերությունները պահանջում են հաշվի նստել վիրտուալ աշխարհի գոյության և վիրտուալ տարածության սահմաններում ապացուցողական նշանակություն ունեցող տվյալների պահպանման փաստի հետ, հետևապես, առաջարկվում է, որ զննում կատարելու իրավահարաբերությունները կարգավորող համապատասխան իրավադրույթում տեղ գտած տեղանք եզրույթին տրվի լայն մեկնաբանություն՝ դրա սահմանների մեջ ներառելով վիրտուալ տեղանքը որպես տեղանքի տարատեսակ:

Երրորդ՝ **«Էլեկտրոնային փաստաթղթի ստուգման դատավարական առանձնահատկությունները և գնահատումը»** վերնագրով պարագրաֆում ուսումնասիրության են ենթարկվում էլեկտրոնային փաստաթղթերի ստուգման առանձնահատկությունները և դրա արդյունքներով էլեկտրոնային փաստաթղթի գնահատումը:

Թվային տեղեկատվության առանձնահատկությունները հաշվի առնելով, փաստվում է, որ էլեկտրոնային ապացույցների բովանդակության ստուգման առանձնահատկությունը կայանում է կատարվող գործողությունների երկակի ուղղվածության մեջ, որոնք են՝ թվային տեղեկատվության փաստացի բովանդակության

ճանաչման և էլեկտրոնային կրիչի վրա դրանց ամրագրման եղանակի (մետատվյալների) ճանաչման ուղղվածությունները:

Անդրադառնալով ապացույցների հավաստիության ստուգմանը, ատենախոսի կողմից փաստվում է, որ էլեկտրոնային թվային ստորագրության առկայությունը բացառում է այն էլեկտրոնային փաստաթղթի վերախմբագրումը կամ փոփոխումը, որի վրա այն տեղադրված է, ուստի դրա առկայությունը բավարար է փաստելու համար, որ էլեկտրոնային փաստաթղթի հավաստիությունը՝ որպես ապացույցի հատկանիշ, ստուգված է: Այլ թվային տեղեկատվության վերաբերյալ փաստվում է, որ դրանց հավաստիության ստուգման ճանապարհ է հանդիսանում մետատվյալների ճանաչումը, կամ այդպիսի հնարավորության բացակայության դեպքում համապատասխան փորձաքննության նշանակումը, որի պայմաններում արձանագրված տեղեկատվության հավաստիությունը պետք է հաստատվի կամ հերքվի փորձաքննության եզրակացությամբ:

Անդրադառնալով էլեկտրոնային ապացույցների գնահատման առանձնահատկությանը շեշտվում է, որ այն կայանում է ապացույցների գնահատման գործընթացի օբյեկտիվ հենք հանդիսացող էլեկտրոնային փաստաթղթի ստուգման ընթացքում կատարվող գործողություններում:

Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսը հանգել է հետևյալ եզրակացություններին.

1.Քրեադատավարական ապացուցման տեսության հիմքը ճանաչողությունն է: Տեղեկատվությունն այն հիմնական գործիքն է, որի միջոցով իրականացվում է ճանաչողական գործընթացը, այդ թվում նաև՝ ապացուցումը:

Տեղեկատվական հոսքերի, տեղեկատվության ստեղծման և շրջանառության գործընթացներում առանցքային դերակատարություն ունի էլեկտրոնային փաստաթուղթը՝ որպես թվային տեղեկատվության յուրահատուկ կրիչ:

2. Էլեկտրոնային փաստաթուղթն անհրաժեշտ է դիտարկել, որպես փաստաթղթի տարատեսակ, որն իրավական կարգավիճակի առումով ոչնչով չի զիջում ավանդական, թղթային փաստաթղթին:

Հատկանշական է, որ փաստաթուղթ հասկացության պարտադիր բաղադրիչ է որոշակի անհատականացնող տվյալներ պարունակելու հանգամանքը, որի բացակայությունն այս կամ այն կերպ արձանագրված տեղեկությանը զրկում է փաստաթուղթ կոչվելու հնարավորությունից:

3. Էլեկտրոնային փաստաթուղթը դիտարկելով որպես ընդհանրապես փաստաթղթի տարատեսակ՝ կարելի է եզրակացնել, որ ինչպես և թղթային փաստաթղթերը, քրեական դատավարության շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթերը կարող են դիտարկվել որպես ապացույցի աղբյուր՝ քննչական կամ դատական գործողության արձանագրության և առանձին ապացույցի տեսակի դատավարական ձևերի շրջանակներում:

4. Ատենախոսը փաստում է, որ թվային տեղեկատվության՝ որպես ապացույցի աղբյուրի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ այն, որ ապացուցողական նշանակություն կրում է անմիջապես թվային տեղեկատվությունը, այլ ոչ թվային տեղեկատվության նյութական կրիչը:

5. Քրեական վարույթի շրջանակներից դուրս ստեղծված այն թվային տեղեկատվությունը, որը չի պարունակում դրա հեղինակի մասին բավարար տվյալներ ընդհանրապես չի համապատասխանում քրեադատավարական գործող օրենսդրությամբ ամրագրված ապացույցների տեսակներից ոչ մեկին և հետևապես չի կարող ապացույց ճանաչվել քրեադատավարական ապացուցման շրջանակներում, այնինչ տեղեկատվության այս տեսակն իր մեջ կարող է պարունակել էական ապացուցողական նշանակություն ունեցող տվյալներ, որոնք վերը հիշատակված գիտական գրականության մեջ իրավացիորեն գնահատվում են որպես հանցագործության հետքերի անալոգ:

6. Իրականցված ուսումնասիրությունների արդյունքներով՝ կարելի է եզրակացնել, որ առկա է քրեական գործերով նախաքննության կատարման և նյութերի նախապատրաստման լիազորություն ունեցող մարմինների կողմից տեղեկատվական թվային շտեմարանների շահագործման և այդ համակարգերի միջոցով տեղեկությունների ստացման համընդհանուր կարգ սահմանելու անհրաժեշտություն:

Ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2018 թվականի փետրվարի 20-ին կայացված թիվ 22-Լ հրամանին կից հավելվածով ամրագրված էլեկտրոնային տեղեկատվական-որոնողական համակարգերից օգտվելու կարգը՝ կարծում ենք, այն անհրաժեշտ է լրացնել՝ ամրագրելով մասնավորապես հետևյալը՝ յուրաքանչյուր քննիչ պետք է ունենա էլեկտրոնային շտեմարանից օգտվելու համար նախատեսված իր անհատական էջը և համապատասխան տեղեկատվության որոնողական գործողությունները կատարի այդ էջի շահագործման միջոցով: Միևնույն ժամանակ, այդ էջի շահագործման արդյունքում ստացված տեղեկատվությունը պետք է անմիջապես հաստատվի քննիչի էլեկտրոնային թվային ստորագրությամբ և պարունակի համապատասխան տվյալներ էլեկտրոնային շտեմարանի այն անհատական էջի մասին, որի միջոցով ստացվել է տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվության ստացման պահի մասին, այն քրեական գործի մասին, որի շրջանակներում ներկայացվել է քննիչի համապատասխան պահանջը:

Կարծում ենք, որ հիշատակված հրամանն առաջարկվող լրացումների կատարումից հետո պետք է օգտագործվի որպես մոդելային օրինակ՝ քրեական հետապնդման մարմինների կողմից տեղեկատվական թվային շտեմարանների շահագործման և այդ համակարգերի միջոցով տեղեկությունների ստացման համընդհանուր կարգի մշակման համար:

Ատենախոսական հիմնական դրույթներն արտացոլված
են հետևյալ հրապարակումներում՝

1. Հարությունյան Զ., Էլեկտրոնային փաստաթղթի հասկացությունը և առանձնահատկությունները // «Արդարադատություն» ամսագիր, Եր., «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2016, № 3(34), էջ 47-51:

2. Հարությունյան Զ., Ղամբարյան Ա., Տեղեկատվական հասարակությունում հարցաքննությունը էլեկտրոնային եղանակով արձանագրելը // «Դատական իշխանություն» ամսագիր, Եր., «Անտարես» 2017, № 3/213, էջ 68-74:

3. Հարությունյան Զ., Էլեկտրոնային փաստաթուղթը քրեադատավարական ապացույցի տեսակների համակարգում // «Արդարադատություն» ամսագիր, Եր., «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, 2018,№ 1(42), էջ 15-20:

4. Հարությունյան Զ., Քրեական դատավարության ձևի պարզեցումը տեղեկատվական հասարակությունում // «Արդարադատություն» ամսագիր, Եր., «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ, 2018, № 2(43), էջ 37-43:

5. Հարությունյան Զ., Դատավարական գործողությունների էլեկտրոնային տարբերակով արձանագրման հեռանկարները // Одиннадцатая годичная научная конференция (5-9 декабря 2016г.): Сборник научных статей: Социально-гуманитарные науки. – Ер.: Изд-во РАУ, 2017. Часть 1. С. 122-127.

6. Հարությունյան Զ., Համացանցում տեղակայված տեղեկատվությունը հավաքելու դատավարական առանձնահատկությունները // «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Եր., «Աստղիկ Գրատուն», 2018, № 105, էջ 18-23:

АРУТЮНЯН ЗОРАЙР САМВЕЛОВИЧ
ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОБИРАНИЯ, ПРОВЕРКИ И ОЦЕНКИ ЭЛЕКТРОННОГО ДОКУМЕНТА В УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ ДОКАЗЫВАНИИ РА
РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию электронного документа как источника доказательства, а также возможностям использования результатов технологического прогресса в уголовно-процесцуальном доказывании. **Актуальность темы диссертационного исследования**, в первую очередь, обусловлена формированием информационного общества, научно-технологическим прогрессом, созданием всемирных сетей, средств дистанционной передачи информации, в которых электронный документ, как носитель достоверной информации, играет важнейшую роль. Любая научная проблематика требует комплексного исследования, в рамках которого, в числе иного обязательно должны быть учтены тенденции развития и требования общества в актуальном промежутке времени.

По мнению автора, указанные выше процессы обуславливают повышение актуальности вопросов использования электронных документов в уголовно-процессуальном доказывании и возможности перехода к электронному документообороту.

В соответствии с пунктом 1.7 протокольного решения N 7 Правительства Республики Армения от 25-го февраля 2010 года “об утверждении концепции формирования электронного общества в Республике Армения” электронный документ и информация не должны уступать традиционным документам по правовому статусу, что приводит к повышению актуальности вопросов рассматриваемых в диссертации.

Элементы уголовно-процессуального доказывания и само доказывание имеют первичную важность в вопросе отправления уголовного правосудия, так как

гарантируют возможность вынесения окончательного решения по уголовному делу, а также возможность перехода от одного этапа уголовного процесса к другому.

Развитие информационных технологий, их широкое применение, создание новых средств связи, создание виртуального мира и его существование, наличие новых видов носителей информации обуславливают возникновение ряда вопросов, которые подвергнуты исследованию в рамках диссертационной работы.

По мнению автора, вышеуказанные обстоятельства, а также отсутствие глубокого изучения темы в отечественном процессуальном праве, существующие разновидные восприятия и выраженные позиции в отношении ее многочисленных вопросов в процессуальной литературе, объективно свидетельствуют о высокой степени актуальности темы.

Научная новизна исследовательской работы заключается в том, что впервые в отечественной процессуальной науке, основываясь на действующем законодательстве и на проекте нового уголовно-процессуального кодекса РА, а также на сравнительном исследовании уголовно-процессуальных законодательств отдельных зарубежных стран, теоретических мнений, была предпринята попытка подвергнуть комплексному исследованию ряд вопросов, связанных с использованием электронных документов в рамках уголовно-процессуального доказывания.

Автор подверг исследованию основные вопросы, которые в процессуальной литературе не были изучены или были изучены не в полном объёме. К таковым можно отнести следующие вопросы: возможность использования цифровой информации в качестве доказательства, соотношение электронного документа и цифровой информации, сущность и значение понятия электронного документа и его особенностей, внедрения и использования электронных информационно-поисковых систем, способы собирания цифровой информации в уголовно-процессуальном доказывании и их особенности и другие. На основании результатов научного исследования были осуществлены научные заключения и сформированы предложения законодательных изменений.

Практическая и теоретическая значимость работы заключается в том, что на основании результатов исследования предложенные законодательные поправки могут быть применены законодателем при дальнейшей разработке уголовно-процессуального законодательства, в том числе, способствовать решению вопросов, существующих в правоприменительной практике. Кроме того, данная диссертационная работа имеет высокое практическое значение, поскольку использование сделанных диссертантом заключений в судебной практике будет способствовать повышению эффективности и доступности отправления уголовного правосудия, что в свою очередь положительным образом повлияет на повышение уровня общественного доверия по отношению к правоохранительным органам и органам осуществляющим правосудие.

Теоретическая значимость диссертационной работы заключается в том, что впервые в отечественном процессуальном праве произведено комплексное исследование проблем собирания, проверки и оценки электронных документов в качестве доказательств в уголовном процессе, результаты и теоретические выводы которого, могут способствовать расширению теоретических представлений о теме

исследования, стать предметом конструктивных научных дебатов и выступать в качестве научного источника для разработки дальнейших подобных исследований, а также быть полезным для проведения специальных курсов по теме исследования или при осуществлении деятельности органами, осуществляющими производство по уголовным делам.

Диссертация состоит из введения, трех глав, объединяющих семь параграфов, заключения, а также списка использованной литературы и правовых источников.

Все вышеизложенное свидетельствует о целом и полном исследовании, осуществленном диссертантом, которое может оцениваться как существенный вклад в процессе развития современного уголовно-процессуального права.

ZORAYR SAMVEL HARUTYUNYAN

MAIN PROBLEMS OF COLLECTING, VERIFYING AND EVALUATING ELECTRONIC DOCUMENT IN THE CRIMINAL-PROCEDURAL PROOF OF THE RA

SUMMARY

Dissertation is devoted to the study of the electronic document as a source of evidence, as well as the possibilities of using the results of technological progress in criminal procedural proof. **Actuality of dissertational research topic**, first of all, is conditioned by the formation of the information society, scientific and technological progress, the creation of world networks, the means of remote information transmission, in which the electronic document plays the most important role as a reliable information carrier. Any scientific problematic requires a comprehensive study, within which, among other things, the development tendencies and demands of the society in the actual period of time must be taken into account.

According to the author, the processes mentioned above cause an increase in the relevance of issues concerning the possibilities of the use of electronic documents in criminal procedural proof as well as the possibilitiy of transition to electronic document circulation more relevant.

In accordance with paragraph 1.7 of Protocol Decision No. 7 of the Government of the Republic of Armenia of February 25, 2010 "on the approval of the concept of the formation of an electronic society in the Republic of Armenia," the electronic document and information should not be inferior to traditional documents on legal status. This leads to an increase in the relevance of the issues which are addressed in the dissertation.

The elements of criminal procedural proving process and the proving process itself are of primary importance in the matter of administering criminal justice, as they guarantee the possibility of a final decision on the criminal case, as well as the possibility of moving from one stage of the criminal procedure to another.

The development of information technologies, their wide application, the creation of new means of communication, the creation of the virtual world and its existence, the availability of new types of information carriers cause the emergence of a number of issues that are subjected to research in the thesis work.

According to the author, the above-mentioned circumstances, as well as the lack of a thorough study of the topic in the domestic procedural law, the existing diverse perceptions and expressed positions with regard to its numerous issues in the procedural literature, are a vivid proof to the high degree of relevance of the topic.

The scientific novelty of the research work is that for the first time in the national procedural science, based on the current legislation and on the draft of the new Code of Criminal Procedure, as well as on a comparative study of criminal procedural legislations of certain foreign countries as well as theoretical opinions, an attempt was made to provide a complex research of a number of issues related to the use of electronic documents in the context of criminal procedural proof.

The author researched the main issues that were either not studied in the procedural literature or were not studied in full. These include: the possibility of using digital information as evidence, the relation between an electronic document and digital information, the nature and significance of the concept of an electronic document and its features, the introduction and use of electronic information retrieval systems, the ways of collecting digital information in criminal procedural proof and their features and a number of other issues. Based on these and other results of scientific research, scientific conclusions were drawn up and proposals for legislative changes were formed.

The practical and theoretical significance of the work is vested in the fact that the proposed legislative amendments can be applied by the legislator in the further development of the criminal procedural legislation based on the results of the study, including facilitating the resolution of issues existing in law enforcement practice. In addition, the present dissertation is of high practical importance, since the use of the conclusions made by the author in judicial practice will help to increase the efficiency and accessibility of the administration of criminal justice, which in turn will positively influence the increase in the level of public confidence in law enforcement bodies and bodies administering justice.

The theoretical significance of the dissertation is that for the first time in the domestic procedural law, a comprehensive study of the problems of collecting, verifying and evaluating electronic documents as evidence in a criminal trial is conducted, the results and theoretical conclusions of which can contribute to expanding theoretical concepts of the research topic, become an object of constructive scientific debate and act as a scientific source for the development of further similar studies, as well as be useful for carrying out special courses on the topic of the research or when carrying out activities by the bodies conducting criminal proceedings.

The dissertation consists of an introduction, three chapters combining seven paragraphs, a conclusion, and a list of used literature and legal sources.

All of the above attests to the whole and full study carried out by the author, which can be assessed as a significant contribution to the development of modern criminal procedure law.